ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր գիտությունն է համալիր կերպով ուսումնասիրում երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով :**

1) երկրաբանությունը
2) լանդշաֆտագիտությունը
3) երկրագրությունը
4) քարտեզագրությունը

2 **Ստորև բնութագրումով ո՞ր մեթոդին է վերաբերում:**

Քանակական մեթոդներից մեկն է: Այն առավել լայն կիրառում ունի հատկապես հասարակական աշխարհագրության մեջ: Նրա հիմնական նպատակը քանակական ելակետային տվյալների հավաքումը, մշակումը և վերլուծությունն է: Ո՞ր մեթոդն է.

1) քարտեզագրական
2) օդատիեզերական
3) մաթեմատիկական
4) վիճակագրական

3 **Ստորև թվարկված ուղություններից ո՞րն է համապատասխանում 45° ազիմուտին:**

1) հյուսիս-արևելք
2) հյուսիս-արևմուտք
3) հարավ-արևելք
4) հարավ-արևմուտք

4 **Ստորև թվարկված մասշտաբներից որո՞նք են համապատասխանում միջին մասշտաբի քարտեզներին:**

1) 1 : 50 000 — 1 : 100 000
2) 1 : 1000 000 — 1 : 2000 000
3) 1 : 10 000 — 1 : 200 000
4) 1 : 200 000 — 1 : 1000 000

5 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում նստվածքային օրգանական ծագման ապար:**

1) տուֆ
2) տորֆ
3) կավ
4) ավազ

6 **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Որակական ֆոնի կիրառման դեպքում պատկերվող տարածքի տարբեր մասեր ներկվում են տարբեր գույներով, կամ ներկվում են ըստ որևէ հատկանիշի։
2) Ծովային հոսանքները շարժման գծերով են պատկերվում քարտեզի վրա։
3) Մերձբևեռային լայնությունները քարտեզագրելու համար օգտագործում են գլանային պրոյեկցիան։
4) Աղավաղումների բնույթով պայմանավորված քարտեզագրական պրոյեկցիաները՝ լինում են հավասարամեծ, հավասարանկյուն և ազատ։

7 **Ո՞ր ժամանակաշրջանին է համապատասխանում անթրոպոգեն փուլը։**

1) պրոտերոզոյան
2) կայնոզոյան
3) պալեոզոյան
4) մեզոզոյան

8 **Ինչպիսի՞ արագությամբ է Հարավային Ամերիկան հեռանում Աֆրիկայից։**

1) 7-8 սմ/տարի
2) 9-10 սմ/տարի
3) 1-2 սմ/տարի
4) 3-4 սմ/տարի

9 **Ուսումնասիրությունների համաձայն երկրագունդը տարեկան մոտավորապես որքա՞ն ջուր է կորցնում։**

1) 0,3 կմ^3
2) 0,5 կմ^3
3) 0,1 կմ^3
4) 0,2 կմ^3

10 **Մթնոլորտի ձևավորման անթթվածնային փուլի ժամանակ ո՞ր գազի քանակն է գերազանցել 90%-ը։**

1) ածխաթթու գազ
2) օզոն
3) ջրային գոլորշի
4) ազոտ

11 Ո՞ր դարաշրջանում են առաջացել ձվածին կաթնասունները։

1) Պալեոզոյան
2) Պրոտերոզոյան
3) Արխեյան
4) Կայնոզոյան

12 Ո՞ր դարաշրջանում է ցամաքում ձևավորվել հողային ծածկույթը.

1) Պալեոզոյան
2) Պրոտերոզոյան
3) Արխեյան
4) Կայնոզոյան

13 Ո՞ր աստիճանի ջուրն է ամենախիտը։

1) +6˚C
2) +7˚C
3) +4˚C
4) +5˚C

14 Ո՞ր զոնայում է մարդը մեծամասամբ զբաղվում ձկնորսությամբ և եղջերվապահությամբ։

1) անապատ
2) սավաննա
3) տունդրա
4) տայգա

15 Ո՞ր զոնայում են մեծամասամբ գերակշռում սևահողերը։

1) անապատ
2) սավանա
3) տունդրա
4) տափաստան

16 Ո՞ր նեղուցուցով են բաժանվում իրարից Աֆրիկան ու Եվրոպան։

1) Մալակկայի
2) ԼաՄանշի
3) Մոզամբիկի
4) Ջիբրալթարի

17 **Ո՞ր թերակղզին է Աֆրիկայում։**

1) Առնհեմլենդ
2) Սոմալի
3) Ապենինյան
4) Ֆլորիդայի

18 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ավստրալիան հարուստ է լճերով։
2) Ավստրալիայի ամենախոշոր գետը Օբն է։
3) Ավստրալիան չունի արտեզյան ավազան։
4) Ավստրալիան ամենաչոր մայրցամաքն է։

19 **Ո՞ր լեռնագագաթն է գտնվում Անտարկտիդայում։**

1) Մոնբլան
2) Կիլիմանջարո
3) Վինսոն
4) Կոսցյուշկո

20 **Ո՞ր ջրվեժն է Հարավային Ամերիկայում։**

1) Նիագարա
2) Անխել
3) Լիվինգստոն
4) Վիկտորիա

21 **Ո՞ր կենդանին է ապրում Հյուսիսային Ամերիկայում։**

1) բիզոն
2) բադակտուց
3) լամա
4) կենգուրու

22 **Ո՞ր հրաբուխը *չի* գտնվում Եվրասիայում։**

1) Հեկլա
2) Կրակատաու
3) Էտնա
4) Օրիսաբա

23 **Ո՞ր դաշտավայրը *չի* գտնվում Եվրասիայում։**

1) Օրինոկոյի
2) Թուրանի
3) Մեկոնգի
4) Միջագետքի

24 **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Պետական սահմանը կոչվում է աշխարհագրական, եթե անցնում է միջօրեականով կամ զուգահեռականով։
2) Անտարկտիկայի ջրերը մտնում են Ավստրալիայի տնտեսական գոտու մեջ։
3) Ինքնիշխան պետությունը քաղաքականորեն կազմակերպված տարածք է, որը կառավարվում է դրա վրա ձևավորված ինքնիշխան կառավարության կողմից և ճանաչված է միջազգային հանրության մեծ մասի կողմից։
4) Պետական սահմանը կարող է լինել լեռնագրական, եթե անցկացված է լեռների ջրբաժաններով կամ գետերի հունով։

25 **Ո՞րը միգրացիայի տեսակ *չէ։***

1) սեզոնային
2) քաղաքական
3) մշտական
4) ժամանակավոր

26 **Ո՞ր ռասայի ներկայացուցիչներն են առանձնանում սև, կոշտ և ուղիղ մազերով, մաշկի դեղնավուն գույնով, տափակ դեմքով, խիստ արտահայտված այտոսկրերով, աչքի նեղ բացվածքով և վերին կոպի խիստ զարգացած ծալքով։**

1) մոնղոլոիդ
2) նեգրոիդ
3) ավստրալոիդ
4) եվրոպեոիդ

27 **Ո՞ր քաղաքը *չի* մտնում Հռենոս-Ռուր քաղաքային խոշոր կուտակման մեջ։**

1) Դույսբուրգ
2) Դրեզդեն
3) Դյուսելդորֆ
4) Դորտմունդ

28 **Ո՞ր ռեսուրսն է համարվում վերականգնվող։**

1) անտառափայտ
2) արեգակնային էներգիա
3) երկաթաքար
4) քամու էներգիա

29 **Աշխատանքի ո՞ր բաժանման ժամանակ են երկրները մասնագիտանում որևէ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ։**

1) միջշրջանային
2) միջազգային
3) աշխարհագրական
4) հասարակական

30 **Ո՞ր երկիրը չի համարվում առաջատար համաշխարհային ածխարդյունաբերության մեջ։**

1) Վրաստան
2) Ռուսաստան
3) Չինաստան
4) Հնդկաստան

31 **Ինչո՞վ պայմանավորված չէ սև մետաղաձուլության մեջ զարգացող երկրների բաժնի մեծացումը։**

1) էկոլոգիապես վնասակար արտադրությունները դուրս բերելու և զարգացող երկրներ փոխադրելու միտումը
2) գիտական կենտրոնների առատությունը
3) այդ երկրների վառելիքաէներգետիկ հարուստ պաշարները
4) սպառման ծավալների աճը

32 **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն ունի ելք դեպի ծով։**

1) Մոլդովա
2) Ռումինիա
3) Չեխիա
4) Սլովակիա

33 **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առաջատար վարդի յուղի արտադրությամբ։**

1) Բուլղարիա
2) Բելոռուս
3) Հունգարիա
4) Լեհաստան

34 **Ստորև թվարկվածներից ո՞րն է երկրամաս։**

1) Չեչնիա
2) Դաղստան
3) Սախա
4) Խաբարովսկ

35 **Ստորև թվարկվածներից ո՞ր թերակղզին Հարավային Եվրոպայում չէ։**

1) Յուկատան
2) Պիրենեյան
3) Բալկանյան
4) Ապենինյան

36 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրի նավատորմիղն է գտնվում աշխարհի առաջին տասնյակում։**

1) Չեռնոգորիա
2) Սլովենիա
3) Լեհաստան
4) Հունաստան

37 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկիրը *չի* համարվում Բենիլյուքսի երկիր։**

1) Դանիա
2) Լյուքսեմբուրգ
3) Բելգիա
4) Նիդեռլանդներ

38 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը մոտավորապես 82 տարի։**

1) Նիկարագուա
2) Նամիբիա
3) Նորվեգիա
4) Նիգերիա

39 **Քարտեզ 1-ում ո՞ր երկիրն է նշված Դ տառով:**

1) Լիբանան
2) Քուվեյթ
3) Հորդանան
4) Իրաք



Քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր մայրաքաղաքն է նշված Ը տառով:**

1) Թեհրան
2) Մասկատ
3) Թբիլիսի
4) Անկարա

41 **Քարտեզ 2-ում Ա տառով ո՞ր լեռնաշղթան է նշված:**

1) Արեգունու
2) Գեղամա
3) Վարդենիսի
4) Զանգեզուրի

42 **Քարտեզ 2-ում Գ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Արմավիրի
2) Կոտայքի
3) Արարատի
4) Վայոց ձորի



Քարտեզ 2

43 **Ո՞ր լեռնագագաթը *չի* գտնվում Սասնա լեռներում։**

1) Մարութա
2) Ջիլո
3) Ծովասար
4) Անդոկ

44 **Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը։**

1) 1990թ
2) 1991թ
3) 1988թ
4) 1989թ

45 **Ո՞ր հանքավայրում կա նեֆելինային սիենիտ։**

1) Հրազդան
2) Կապուտան
3) Սվարանց
4) Շվանիձոր

46 **Ո՞ր բնակավավայրում է դիտվել ամենացածր ջերմաստիճանը։**

1) Ախուրյան
2) Վարդենիս
3) Պաղակն
4) Մարտունի

47 **Ո՞ր կլիմայական գոտում են թափվում ամենաշատ տեղումները։**

1) Ցուրտ լեռնային
2) Ձյունամերձ լեռնային
3) Չոր ցամաքային
4) Բարեխառն լեռնային

48 **Ո՞ր գետն է սկիզբ առնում Արագածի ու Փամբակի լանջերից։**

1) Ողջի
2) Վեդի
3) Քասաղ
4) Ազատ

49 **Ո՞ր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներն են ապրում Լոռու մարզի Լերմոնտովո և Մեղովկա բնակավայրերում։**

1) եզդիներ
2) ասորիներ
3) հույներ
4) ռուսներ

50 **ՀՀ ո՞ր քաղաքն է գտնվում Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում։**

1) Վանաձոր
2) Նոյեմբերյան
3) Սպիտակ
4) Ստեփանավան

51 **Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով։**

1) Ռուսաստանը և Բրազիլիան
2) Վրաստանը և Նորվեգիան
3) Կանադան և Տաջիկստանը
4) Սաուդյան Արաբիան և Չադը

52 **Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.**

1) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
2) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
3) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը
4) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը

53 **Ո՞ր երկիրն է առավել քիչ անտառապատ.**

1) Կանադա
2) Իրան
3) Ռուսաստան
4) Ինդոնեզիա

54 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) կարի արտադրությունը
2) կոնյակի արտադրությունը
3) սարքաշինությունը
4) պղնձաձուլությունը

55 **Տրվածներից ո՞րը էրոզիայի առաջացման պատճառ *չէ*։**

1) արոտավայրերի գերարածեցումը
2) գետերի վարարումները։
3) անտառային տարածքների կրճատումը
4) խախտված հողերի վերականգնումը

56 **Գրել այն երկրների համարները, որոնք մտնում են աշխարհի առաջին տասնյակի մեջ մեքենաշինության զարգացվածությամբ։**

1) Գերմանիա
2) Ճապոնիա
3) Չինաստան
4) Իրաք
5) Հնդկաստան
6) Ղազախստան
7) Աֆղանստան
8) Բանգլադեշ

57 **Գրել այն երկրների համարները, որոնք կոշկեղենի գլխավոր արտադրողներն են։**

1) Գերմանիա
2) Իսպանիա
3) Չինաստան
4) Իտալիա
5) Հնդկաստան
6) Ինդոնեզիա
7) Ուզբեկստան
8) Տաջիկստան

58 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք հարուստ են վարելահողերով։**

1) Կանադա
2) Դանիա
3) Չինաստան
4) Իրան
5) Հնդկաստան
6) Ղրղզստան
7) Պակիստան
8) ԱՄՆ

59 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են կարտոֆիլի համախառն բերքով։**

1) Արգենտինա
2) Կոնգո
3) Չինաստան
4) Օման
5) Հնդկաստան
6) Վրաստան
7) Ռուսաստան
8) ԱՄՆ

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են սուրճի արտադրությամբ։**

1) Կանադա
2) Եթովպիա
3) Բրազիլիա
4) Կոլումբիա
5) Զամբիա
6) Ինդոնեզիա
7) Պակիստան
8) ԱՄԷ

61 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով։**

1) Շվեդիա
2) Բելգիա
3) Չինաստան
4) Բրազիլիա
5) Հնդկաստան
6) ՀԱՀ
7) Եգիպտոս
8) ԱՄՆ

62 **Տրված տարածաշրջանները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով՝ 2022թ տվյալներով։**

1) Հյուսիային Եվրոպա
2) Արևմտյան Եվրոպա
3) Արևելյան Ասիա
4) Հարավային Ասիա

63 **Տրված ԱՄՆ նահանգները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ։**

1) Արիզոնա
2) Տեխաս
3) Կալիֆորնիա
4) Ֆլորիդա

64 **Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը, եթե դրանցից մեկը հս.լ.11°-ի վրա է, իսկ մյուսը՝ հվ.լ.10°-ի։**

65 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ.29° և արլ.ե. 115°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը մարտի 21-ի կեսօրին:

66 Օդի հարաբերական խոնավությունը 24 գ/սմ³ է, իսկ օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 60 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

67 Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե այնտեղ ընդհանրապես ապրում է 90 մլն. մարդ, իսկ կոնկրետ գյուղերում՝ 18 մլն. մարդ:

68 **Որքա՞ն է երկրի բնակչության տարեկան բացարձակ մահացությունը, եթե այնտեղ ապրում է 3 մլն մարդ, իսկ մահացության ցուցանիշը 6‰ է։**

69 **Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Այստեղ է ձևավորվել Եվրոպայի ամենահզոր տրանսպորտային համակարգը։
2) Ռուրը աշխարհի խոշորագույն նավթային ավազաններից է։
3) Արդյունաբերության մեջ մեծ տեղ են գրավում էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը։
4) Շատ խիտ է բնակեցված Հյուսիսգերմանական դաշտավայրը։
5) Գերմանիան աշխարհի առավել քաղաքայնացված երկրներից է։
6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է։

70 **ՀՀ մարզերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Լոռու մարզում է Շամլուղի պղնձահանքը։
2) Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքը հայտնի է գարեջրի արտադրությամբ։
3) Արագածոտնում է Մաստարայի սելավային գետակը։
4) Արմավիրի մարզի լեռնաշղթաներից են Ուրծը և Երանոսը։
5) Արարատի մարզում է Շամիրամի լավային սարավանդը։
6) Շիրակի մարզի գերխոշոր գյուղերն են Ախուրյանը և Ազատանը։